

Մ. Հ. ՄԻՒԹԱՐՅԱՆ

ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ ՑԵՆՁՈՒՐԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Ցարական ցենզուրան իրեն զգացնել է տվել և հայ իրականության մեջ: Հայ պարբերականները հիմնականում գրաքննության էին ենթարկվում Թիֆլիսում և Պետերբուրգում, իսկ որոշ օրգաններ՝ նաև նահանգական մի քանի կենտրոններում: Այդ, սակայն, չէր փրկում նրանց, քանի որ նրանք տպագրվելուց հետո կրկին ստուգվում էին Կովկասյան ցենզուրային կոմիտեի կողմից և շատ հաճախ ենթարկվում արգելքների: Այսպես, Կովկասյան ցենզուրային կոմիտեի նյութերից պարզվում է, որ Ս. Հախումյանի խմբագրությամբ Շուշիում հրատարակվող «Գործ» հանգեսը շնայած ցենզուրայի էր ենթարկվում Ելիզավետպոլում, հետագայում զրկվում է այդ արտոնությունից և ենթարկվում Կովկասյան ցենզուրային վարչությանը: Այդ բախտին է արժանանում և Վ. Պապաջանյանի «Պասակ» լրագիրը, որը ցենզուրայի էր ենթարկվում Երևանում: Ցարական կառավարությունը չի խնայում նույնիսկ «Արարատ»-ի հրատարակիչներին, որոնք 1868 թվականից իրենց հանգեսը հրատարակում էին առանց նախնական ցենզուրայի: 1897 թվականին ներքին գործոց մինիստրը թագավորի կարգադրությամբ հրամայում է Կովկասի փոխարքայությանը՝ «Արարատ»-ը ցենզուրայի ենթարկել ընդհանուր հիմունքներով, քանի որ այդ ամսագիրը «բազմիցս շեղվում է իր սկզբնական ծրագրից և ուղղությունից»¹:

Ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Կովկասում ցենզուրան ավելի է խրտանում Ալեքսանդր 2-ի սպանությունից հետո: Վրաստանի Պետական պատմական արխիվում պահպանվող փաստաթղթերից երևում է, որ այդ ժամանակաշրջանում հայ պարբերականները ևս գտնվել են ցարական կառավարության ներքին գործոց մինիստրության ուղադրության կենտրոնում: Այսպես, 1883 թվականի նոյեմբերին Վրաստանի փոխարքայության գրասենյակից քաղաքացիական բաժնի գերագույն պետ իշխան Դոնդուկով-Կորսակովը ցենզուրային կոմիտեի ուղադրությունը հրավիրելով ռուս-թուրքական կռիվներին հաջորդած ժամանակաշրջանում հայ իրականության մեջ առաջացած աշխուժացման վրա, հայտարարում է, որ այն հղի է լուրջ վտանգներով:

Այնուհետև, ոչնչացնելու համար ռուսահայերի մեջ առաջացած, այսպես կոչված, սեպարատիստական ձգտումները, նա գրում է. «Հաղորդելով վերոհիշյալը, խոնարհաբար խնդրում եմ Ձեզ, հանուն բարձրագույն կամքի կատարման, որն ինձ հայտնված է ներքին գործոց մինիստրի միջոցով, ուժեղացնել

¹ Վրացական Պետական պատմական արխիվ, ֆոնդ 480, գիրք 1, գործ 1413:

ցենզուրային խստությունները արտասահմանյան և տեղական հայկական պարբերական մամուլի նկատմամբ»¹։

Գրությունն ստանալուց անմիջապես հետո ցենզուրային կոմիտեն շտապում է փոխարքայության հաստատմանը ներկայացնել իր մշակած միջոցառումները։ Հայ իրականության մեջ առաջացած աշխուժացումը գրության հեղինակները կապում են հիմնականում 2 հարցի՝ էջմիածնի տեղի ու գերի և թոքահայկական շարժման հարցերի հետ։

Լուրջ նշանակություն տալով էջմիածնի շուրջը ծավալվող մտքերի բախմանը, կոմիտեն այն միտքն է հայտնում, թե կաթողիկոսին անսահմանափակ իրավունքներ տալու և 1836 թվի «Պոլոժենիեն» այս առումով քննության տակ ձգելու փորձերը չեն կարող արտահայտություն գտնել հայ մամուլում. «Այս կարգի հողվածները.— ասված է գրության մեջ,— հարկավ չեն կարող դառնալ պարբերական մամուլի նյութ, ուստի ցենզուրան շթուլացող ուժով ու միանգամայն հետևողականորեն վանում է հայ բնակչության մեջ այսօրինակ հայացքներ տարածելու նպատակով որոշ օրգանների կողմից արվող բոլոր փորձերը»։ Ինչ վերաբերում է արևմտահայության հետ կապված հողվածների տպագրությանը, ապա ցենզուրային կոմիտեն հաշվի առնելով, որ դրանց հեղինակները քողարկված ձևով պրոպագանդում են Հայաստանի վերականգնման անհրաժեշտությունը իբրև մի անկախ քաղաքական մարմնի, նպատակահարմար է գտնում ընդհանրապես արգելել այս կարգի հողվածների տպագրությունը։ Հետաքրքրական է, որ հիմնականում խրախուսելով հանդերձ այս միջոցառումները, փոխարքայությունն այնուամենայնիվ գտնում է, որ այդ թեմաներով հնարավոր է որոշ հողվածներ տպագրել, եթե միայն դրանք հակակառավարական ուղղություն չունենան։

Հայ պարբերականների նկատմամբ կիրառվող ցենզուրային խստությունները գնալով ուժեղանում և ծայր աստիճանի են հասնում 1895—96 թվականներին։ Այս շրջանում թուրքիայում սկսված հայկական կոտորածների հետևանքով կրկին բարձրանում է հայկական հարցը։ Ահաբեկված վերահաս իրադարձություններից, փոխարքայության գրասենյակից 1895 թվականի ապրիլի 8-ի թվակիր № 208 գրությամբ ցենզուրային կոմիտեին՝ կարգադրվում է շթուլատրել հայկական հարցի մասին գրված որևէ հողվածի տպագրություն, քանի որ այն բարձրանալով տեղական հարցերի մակարդակից, միջազգային նշանակություն է ստացել։ Չափազանց պերճախոս է արխիվում պահպանվող ներքին գործոց մինիստրության գրասենյակի կառավարչի 1895 թվականի նոյեմբերի 30-ի թվակիր գրությունը, որտեղ, ի դեպ, ասված է. «Հայ մամուլը, որ ընդհանրապես երբեք աչքի չի ընկել իր բարեմտությամբ, ներկա քաղաքական իրադարձությունների հետևանքով ձգտում է, ավելի քան երբևէ, ոչ թե խաղաղեցնել, այլ բորբոքել կրքերը և այդ ուղիով նա ընթանում է այնպիսի համառությամբ, որ նույնիսկ ներքին գործոց մինիստրը ուշադրություն դարձրեց նրավտանգավոր ուղղության վրա և նկատի ունենալով, որ հայերի մեջ ծավալվող ներկա շարժումը կարող է հանգեցնել միանգամայն վատ հետևանքների, խընդրում է փոխարքայության գրասենյակի քաղաքացիական գործերի բաժանմունքի գերագույն պետին՝ միջոցներ ձեռք առնել՝ պանձահարելու համար հայոց պրոպագանդան մամուլի էջերում»²։ Այս գրության հետքերով, արդեն դեկտեմ-

¹ Կրթական պետական պատմական արխիվ, ֆոնդ 480, դիրք 1, գործ 574։

² նույն տեղում։

բերի 13-ին, փոխարքայության գրասենյակից ցենզուրային կոմիտեին կարգադրվում է՝ իսկույն սահմանափակել տեղական թերթերի իրավունքները և նրանց արգելել շոշափելու ժամանակի հայկական իշարարձությունների հետ կապված հարցերը: Կովկասի փոխարքայության քաղաքացիական բաժնի գերագույն պետ, գեներալ-ադյուտանտ Շերեմետևը, ելնելով սենատոր Գորեմիկինի հրամանից, կարգադրում է անհապաղ սանձահարել հայկական պրոպագանդան մամուլում, կանխելու համար նրա վտանգավոր ազդեցությունը տեղի հայ բնակչության վրա: Նա միաժամանակ կարգադրում է ցենզուրային կոմիտեին և այն նահանգապետներին, որոնց տնօրինության տակ գտնվող նահանգներում մասնավոր թերթեր էին լույս տեսնում, պաշտոնական հեռագրական գործակալության հաղորդումներից բացի չթույլատրել տպագրելու հայկական շարժումների մասին ստացված որևէ թղթակցություն կամ հաղորդում: Հետաքրքրական է, որ այս գրության վրա ցենզուրային կոմիտեի աշխատակցի ձեռքով գրված է. «Առաջարկվում է հայ թերթերի պարունայք ցենզորներին՝ նրանց անձնական պատասխանատվությամբ ընդունել ի գործադրություն»: Դրա տակ 2 ցենզորների ձեռքով գրված է՝ «կարդացի», որին հաջորդում են նրանց ստորագրությունները:

Այս ամենից հետո բնավ զարմանալի չէ, որ հայկական հարցի մասին գրված բազմաթիվ թղթակցություններ, նամակներ, հոդվածներ ու այլ նյութեր՝ առանց տպագրության թույլատրվելու, առ այսօր մնացել են ցենզուրային կոմիտեի գործերում:

Այս պայմաններում, բնականաբար դժվարանում էր և հայ հեղինակներին գործը: Արգելվում էին նույնիսկ անմեղ բովանդակություն ունեցող փոքրիկ բանաստեղծությունները, արձակի նմուշները, հրապարակախոսական հոդվածները: Չի կարելի առել, սակայն, թե հայ հեղինակներն ու հրապարակախոսները հաշտվելով ստեղծված վիճակի հետ, ստեղծագործում էին ցենզուրային կոմիտեի պահանջներով: Ընդհակառակը, հետևելով 60-ական թվականների ոուս և հայ առաջադիմական գործիչների և հրապարակախոսների օրինակին, նրանք նորանոր միջոցներ էին որոնում՝ իրենց բողոքի խոսքը ընթերցողին հասցնելու:

Մենք այստեղ կանգ կառնենք ցենզուրայի կողմից արգելված երկու ուշագրավ փաստաթղթերի վրա միայն: Դրանցից առաջինը պատկանում է Ստեփանոս Մալխասյանցի գրչին և կրում է «Մողոքի խնջույքը» խորագիրը: «Մշակ» թերթի համար գրված այլաբանական մի դրույց է այս, որին հեղինակը տվել է «նոր տարվա զրույց» ենթավերնագիրը:

1896 թվականի տարեմտին գրված այս զրույցում Մալխասյանցն ամփոփելով 1895 թվականի անցուդարձը, անարգանքի սյունին է գամում բռնության, անիրավության, ստության թագավորությունը: Հույսը չկտրելով այն բանից, որ արդարությունն այնուամենայնիվ կա և թերևս պետք է հաղթի, հայկական կոտորածներից վշտացած հեղինակը, սակայն, արձանագրում է արյունախում Մողոքի իշխանության ուժը, որն իր կնիքն էր դրել ողջ տարվա անցուդարձի վրա. «Կոտորած, բռնություն, անիրավություն... — արձանագրում է Յանուսը 1895 թվականի տարեգրում: Այս պատմվածքը հետաքրքրական է ոչ միայն այն առումով, որ գրված է իբրև բողոքի խոսք ժամանակի և՛ մահմեդական, և՛ քրիստոնյա մողոքների թագավորության դեմ, այլև նրանով, որ մանկավարժական և գիտական գործունեության մեջ մխրձված Մալխասյանցը՝

փորձելով հաղթահարել ցենզուրային արգելակները, դիմել է այլաբանության օգնությանը, հրապարակախոսական ժանրին, այն ծառայեցնելու համար մարդկայնության, խղճի, արդարության թագավորության հաստատմանը: «Մողոքի խնջույքը» արգելվել է ցենզուրային կոմիտեի կողմից՝ «կոմիտեի հատուկ որոշման համաձայն» 1896 թվականի հունվարի 3-ին:

Երկրորդ փաստաթուղթը Պերճ Պոռշյանի թարգմանած «Ամերիկայի նեգրերի երգը» բանաստեղծությունն է, որը Պոռշյանը ներկայացրել էր «Նոր դարի» խմբագրությանը և որը նույնպես 1896 թվականին արգելվել է ցենզուրային կոմիտեի կողմից՝ «տենդենցիոզության պատճառով» մակադրությունով: Թարգմանությունը կցած ծանոթության մեջ Պոռշյանը գրում է. «Վերոգրյալ հոդվածը թարգմանել եմ Ղզլարում, 1871 թվականին «Дело» ռուսական ամսագրից («Дело», 1871, № 1, երես 308): Այն օրից թղթերի ծալքում ընկած մնացել էր առանց ուշադրության:

Երեկ առավոտ երբ փոշիների տակից՝ ծալված, ծալվառված ձեռքս ընկավ գրվածքս և հետաքրքրությունս շարժեց, նույն ժամուն զուգադիպաբար տուն եկավ «Նոր դար»-ը (№ 9, 1896), ուր պ. Խաչումյանցը յուր «Դարավերջի նշաններ պատվական բանասիրականի» մեջ պատմում էր, ի միջի այլոց, Ամերիկայի սևամորթ նեգրուհիների քուլլեջի մասին, որոնց հայրերը, ասում է պ. Խաչումյանը, մի քանի տասնյակ տարի առաջ անասունի պես ճորտություն էին անում... ապա ավելացնում է. «առանց ազատության լույս չկա»... մի փոքր հետո՝ թե... կինո կրավորական դիրք է ունեցել և այլն:

Իսկ և իսկ այն խոսքերն են ընդգծված տողերս, որոնք 24 տարի առաջ հորինած բանաստեղծության ուղ և ծուծն են կազմում, որոնք գերության կաշկանդումներից նոր թևարձակ եղած Ամերիկայի ստրուկ նեգրների սրտի խորքերից են դուրս բխած: Հարգելի Խաչումյանի գողտրիկ հոդվածը մեզ առիթ տվեց փոշու մաշիչ գործությանը դատապարտված «Ամերիկայի նեգրների սրտի փղձանքը» լույս աշխարհ հանելու»:

Ի՞նչ արժեք ունի այս թարգմանությունն այսօր: Ամենից առաջ կարևոր է հիշել, որ «Дело» ամսագիրը անցյալ դարի 70-ական թվականների այն առաջադիմական օրգաններից մեկն էր, թերևս ամենաառաջադիմականն նեկրասովի «Отечественные записки» ամսագրից հետո, որը 70-ական թվականների պայմաններում ձգտում էր պահպանել «վաթսուներկանների» ժառանգությունը: Ամսագրի խմբագիր Բլադոսլավտովը 60-ական թվականներին խմբագրում էր ժամանակի լավագույն օրգաններից մեկը՝ «Русское слово»-ն, որը «Современник»-ի հետ միասին արգելվեց ցարական կառավարության կողմից: Հետագայում նրան հաջողվում է հրատարակել «Дело» պարբերականը, որը գրանցում էր ցենզուրային վարչության ամենօրյա ուշադրության կենտրոնում: Հօսց այս փաստը, որ Պ. Պոռշյանը 70-ական թվականներին հետևում էր ռուս առաջադիմական մամուլին, և ոչ միայն կարդում, այլև թարգմանում այդ մամուլի էջերում տպագրված ազատասիրական բանաստեղծությունը, նոր և փայլուն վկայական է Պոռշյանի կենսագրության, նրա վաղ տարիների ուսումնառության ուղղության վերաբերյալ:

«Ամերիկայի նեգրների երգը» առանձին բանաստեղծություն չէ. այն երգում է Կ. Դուրովոյի «На новом пути» վեպի հերոսուհի Լիզան, որն այդ երգը

լսել էր Ամերիկայում՝ 1857 թվականին հարավային նահանգներից հյուսիսային նահանգները տարագրված նեգր Տորստոնից: Ինչ վերաբերում է վեպին, ապա այն նվիրված լինելով կանանց էմանսիպացիայի հարցին՝ հավանաբար շատ հարազատ էր Պոռոյանին, որը ոչ միայն կարդացել էր վեպը, այլև ոգևորվելով նեգր Տորստոնի ազատասիրական երգով՝ ոգեշունչ թարգմանություն մը ստեղծել մի բանաստեղծություն, որն իր թափով, զգացմունքների ուժգնությամբ և շեշտված ազատասիրական ոգով ոչ միայն շի զիջում, այլ նույնիսկ տեղ-տեղ գերազանցում է բնագրին:

1.

ՍՏ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

ՄՈՂՈՔԻ ԽՆՁՈՒՅՔԸ¹

(ՆՈՐ ՏԱՐՎԱ ԶՐՈՒՅՑ)

Լանկթամուրը նոր էր կատարել իր արշավանքը, նրա անցած տեղերում տիրում էր ամաչություն, ավերակների կույտերում, որ բացել էին գեշակեր գազանները: Երկրի վրա երբ տագնապ էր տիրում՝ երկնքում կատարվում էր հետևյալը:

Թափանցիկ թևերի վրա բազմած էր հինավուրց Յանուսը, նիհար դեմքով, ալեզարդ մորուքով, մի երեսը դեպի արևելք դարձրած, մյուսը դեպի արևմուտք: Նրա ներքև մի գունդ, ինքն իր վրա թավալվելով՝ հավասար շարժողությամբ, բոլորակ գծով առաջ էր գնում անհունության մեջ: Ծերունին խորամուխ աչքերով դիտում էր այս գունդը՝ տեսնում էր ամեն ինչ որ նրա վրա կատարվում էր, թափանցում էր երկոտանի փոքրիկ արարածների ներսը, կարդում էր նրա մեջ այն՝ ինչ որ նրանց բերաններում չկար—և գրում, շարունակ գրում էր իր առաջը դըրված մի գրքի մեջ:

«Այս երեսն էլ լրացավ,— ասաց նա,— հաշիվը հայտնեմ»: Նա նշան տվեց, և իսկույն աջ ու ձախ կողմերից հայտնվեցան բազմաթիվ դեմքեր: Աջ կողմից երևեցավ Մողղը, ծխի և կայծակի մեջ, վիթխարի հասակով, կրակի աչքերով, դոռոզ և հանձնապաստան. նա շրջապատված էր անթիվ սև լակներով, ձեռներին բռնած հրեղեն սրբեր, դիակներ, կարմիր հեղուկով լի բաժակներ: Տախ կողմից երեսը նիհար ուղեկիցներով, երևեցավ մի ուրիշը, փշե պսակը գլխին, կարմիր թղամիդը թիկունքին, եղեգե գավազանը ձեռքին, աչքերը վշտագին դեպի վեր ուղղած:

«Երկրագնդի տարեգրի մի երեսն էլ լրացավ, ասաց Յանուսը. ահա կարդում եմ բովանդակությունը,— «Մողղի թագավորության ...երրորդ և Քրիստոսի ծննդյան ...-րդ տարի: Անիրավությունը տիրապետում է, սպանություն, բռնություն, հալածանք, դավ, կեղծավորություն, զրկանք, բռնարարություն, ծաղկում են. արյուն և արտասուք գետեր են կազմում. ողբ և անեծք երկինք են հասնում. ուժը համարվում է միակ իրավունք. տկարի ձայնը խեղդվում է: Սեր, գթություն, արդարություն մեռած չեն բոլորովին, բայց անիրավության հաղթական ուժի առաջ թագ են կացել երկուդազին: Այս գործերը ամեն տեղ կատարվում են երկրագնդի վրա, բայց ավելի այն աշխարհներում, որ քրիստոնյա անուն են կրում:— Մողղը, դու ես հաղթողը, դու ես երկրագնդի տիրապետն այս տարի ևս»,— վերջացրեց Յանուս իր տեղեկագիրը:

«Ինչպես և միշտ», քրքջաց Մողղը գոհունակությամբ. «այնպես չէ, հրեից թագավոր», դարձավ նա դեպի փշե պսակ կրողը: Դու դեռ ուզում էիր երկրի վրա երկնային թագավորություն հաստատել, հեղուկությամբ հաղթել ամբարտապանության, սիրով՝ իմ ատելության, խոնարհության՝ իմ բռնության. դու մոռացար, որ մարդը ոչինչ, ոչինչ է՝ եթե ոչ գազանների մի տեսակը, որ նա նույնպես է ապրում՝ ինչպես մյուս գազանները—միմյանց ուտելով. երկիր իջար, մարդու կերպարանք առար, աննյութ և անմահ աստվածությունը խառնեցիր նյութեղեն մահանացու դազանի հետ, երևակայելով, թե այդ կերպով գազանը կաստվածանա, աննյութի, անմահի հատկություններ կստանա: Այսբան դարերի փորձը ցույց տվեց, որ դու սխալվեցար. ոչ մի

¹ Վրացական Պետական պատմական տրիսիվ, ֆոնդ 480, գիրք 1, գործ № 1337:

տարի երեսիդ ուրախություն չփայլեց, ոչ մի տարի դու չտիրեցիր Երկրագնդին. նրա ստեղծման օրից մինչև այսօր ես եմ եղել միակ իշխողը: Եկ ճանաչիր թո սխալմունքը, Երկրպագիր և դու ինձ, ինչպես երկրպագում են թո անունը կրող մարդիկ աշխարհի վրա: Լսեցի՞ր Յանոսի վեկուցումը. անիրավության գործեր ավելի կատարում են այն մարդիկ, որոնք քրիստոնյա անունն են կրում: Օ՛ր, ես հավատում եմ այդ քրիստոնյաներին, նրանք թո անունը կրում են, թո անունով երգվում, թո անվան տաճարներ կանգնում, բեզ խունկ են ծխում, փառաբանում, երկրպագում— բայց ես Երբևք չեմ ունեցել նրանց չափ հավատարիմ հետևողներ. նրանց սիրտը, միտքը, գործերը— բոլոր ինձ են նվիրվում. ինձ տաճար են կանգնեցնում, ինձ պաշտում են՝ իրանց հողու մեջ. նրանց գոյությունն ամբողջապես կեղծավորություն և խաբեություն է. կեցցեն՛ իմ հավատարիմ, անիրավության գործի պարագլուխ քրիստոնյաները:

«Կեցցեն՛ քրիստոնյաները, որ երկրպագում են Մեծ Մողոթին», կրկնեցին խավարի ոգիները: Փշե պսակը գլխին,— կարմիր քղամիզը թիկունքին, Էղեզ գավազանը ձեռքին, վշտագին աչքերը գեպի վեր ուղղած՝ կանգնած էր նա. նրա երևք ուղեկիցները դալկացած, տխուր, գլուխները կախած: Նա բացեց բերանը և ասաց.

«Ես մինչ աշխարհումն էի՝ զգուշացրի մարդկանց, որ ինձ «տեր» ասողը չի մտնի երկնքի արքայությունը, այլ նա՝ որ կկատարե նորա կամքը: Շատ-շատ են այժմ այդպիսի մարդիկ, որոնք իմ անունով են ապրում և գործում, բայց սրտով և հոգով անջատված են ինձանից: Նրանց երկրպագությունն ու պաշտոնը որ ինձ են մատուցանում՝ զզվելի են ինձ. նրանց տաճարները՝ պիղծ են ինձ: Նրանք իբրև կուռք պաշտում են ինձ, միմյանց խաբելու համար, բայց նրանք չեն լսում ինձ իբրև վարդապետի: Նրանց երկրպագությունն ու տաճարները նույնպիսի արհամարհանք և ծաղր են ինձ վրա՝ ինչպես այս պսակը, գավազանը և քղամիզը, որով հրևաններ ինձ թագավոր դարձրին»: Նրանց, որ անօրենություն են գործում՝ ես արգեն ասել եմ, որ ինձանից հեռանան, և ես նրանց կուրանամ իմ հոր առաջ: Այդպիսի կեղծավորների և փարիսեցիների դեմ էի մաքառում ես աշխարհի վրա, և դրանք են լինելու իմ հետևողները:

Ըս ունեմ ճշմարիտ հետևողներ, որոնք մերկին և հիվանդին, քաղցածին և ծարավին, բանտարկյալին և վշտացածին օգնություն են հասցնում հանուն մարդասիրության, որոնք կատարի գազանի վրա են հարձակվում՝ նրա բերանից անմեղ գոհը փրկելու համար, որոնք բարձրաձայն հանդիմանում են հզոր կեղծավորների և խաբեբանների վարմունքը, և իմ անվան համար հալածանք են կրում: Քիչ են նրանք, բայց ընտրյալ են: Մարդասիրության և ճշմարտության սերմը, որ ես սերմանեցի աշխարհի վրա՝ դժվար է աճում, փրվենտե ստույգան և ազահության սերմերը հաստարմատ բուսել են և խեղդում են նրանց, բայց նա նեղությունների մեջ չէ ոչնչանում, այլ զարգանում է հետզհետև: Գազան-մարդուն աստվածանման դարձնել այս է եղել իմ նպատակս, և այս վեհ նպատակն իրագործվելու համար ժամանակ է պահանջում: Դու դեռ հզոր ես Մողոթ, բայց թո դրությունը կխորտակվի, և իմ արքայությունը վերջապես կտիրե երկրի վրա: Ես քեզ չեմ երկրպագի, որովհետև դու սուտ ես և անօրենություն»:

«Այդ ծակ գուշակություններն ահա տասնյակ դարեր էլ, որ անում ես, և դեռ երբեք նրանք չկատարվեցան,— պատասխանեց Մողոթը: Անփորձ ես դու, հրեից թագավոր, մարդ չես ճանաչում: Եթե կան երկրի վրա մի քանիսը, որոնք բեզ ճշմարտությամբ հետևում են՝ դրանք աշխարհի հիմարներն են, որոնք երբեք չեն տիրապետի իմաստունների վրա: Չես ուզում՝ մի երկրպագիր ինձ, ես քեզ չեմ բռնադատի և հալածի: Մի անգամ — գեռ նոր էիր ծնել և քարոզում էիր — ես վախեցա, որ մի գուցե իմ տերությունս կործանես, և սկսեցի քեզ հալածել, բայց սխալվեցա. քեզ սպանեցի՝ հետևողներդ ավերացան՝ նրանց էլ հալածեցի՝ հետևողներդ ավելի շատացան: Երկու-երեք հարյուր տարի այսպես վարվեցա, բայց միշտ անաջողության հանդիպեցա այնուհետև: Ես հասկացա, որ հալածանքները քեզ ղորացնում են — և վճռեցի քեզ այլևս նեղություն չտալ — և հասա իմ նպատակիս, թո անունը կրողներն իմ ամենահավատարիմ ծառաները դարձան:— Գնա՛, թո մելամաղձությամբ մի խանգարիր իմ հաղթական տոնիս ուրախությունը»:

Փշե պսակը գլխին, կարմիր քղամիզը թիկունքին, Էղեզ գավազանը ձեռքին, վշտալի աչքերը գեպի վեր ուղղած՝ հեռացավ նա. երեք ուղեկիցները, դժգույն ու տկար՝ նրան հետևեցան: «Թ՛ նչ եք պատրաստել այս ավուր տոնին» դարձավ Մողոթը գեպի խավար ոգիները:

«Ես մի ընտիր խորտիկ եմ բերել»,— ասաց նախանձը,— մի Լրեխա, որ սովից մեռավ մոր գրկում...

«Երա շատ սովորական կերակուր է»,— ասաց Մողոթը դժգոհությամբ:

«Լսիր, մեծ Մողոթ,— շարունակեց նախանձը: Սոված մայրը սոված երեխային գրկած՝ մոտեցավ մի ճոխ սեղանի, որ լի էր ամեն տեսակ կերակուրներով: Այս երեխան թուլացած տրեփում էր: Մայրը, ձայնը փորն ընկած՝ ողորմություն խնդրեց սեղանը նստողներին: «Կորի՛ գնա»

պատասխանեցին մի Երկուր, մի խանգարի մեր ուրախությունը: «Քրիստոսի սիրուն, մի կտոր հաց տվեք. ութ օր է, ոչինչ չեմ կերել, երեսան էլ ոչինչ չէ կերել ութ օր. մի կտոր հաց», և ծունկ շոգած սկսեց լաց լինել: Սեղանի վրա իրարանցում ընկավ: Չորս-հինգ հոգի վերցրին սեղանից հաց և ուրիշ կերակուրներ, որ մուրացկանին տան, մինը մինչև անգամ կանչեց, որ գա իրանց սեղանակից լինի: Մուրացկան կինը Երանություն աչքով նայեց հացի վրա, և մոտեցավ որ առնե: Բայց սեղանակիցներից մեկը շփույլ տվեց:

Ո՛չ, նա մուրացկան կնոջը մի թեթև հարված տվեց, նա, Երեսան գրկին, ընկավ գետին, աչքերը ճոխ սեղանին հառած, հեկեկալիս: Հսկան իր մի բանի նմաններով շարունակեցին զվարթ կերոխումը, մյուսները շփոթված նստած էին, ուտել չէին կարողանում, մուրացկանի և Երեսայի աղետը նրանց տանջում էր: Այսպես սեղանի վրա կերոխումը շարունակվեց՝ մինչև մուրացկանն ու այս Երեսան սովից տանջվելով մեռանա:

«Մ՛, ուրեմն թանկագին խորտիկ է սա», բացականչեց Մողորը: Շնորհակալ եմ ձեզանից, Նախանձ և Ազահություն: Այս տարի մրցանակը պարգևում եմ այդ հսկային:— Նստեցեք, իմ հավատարիմ ծառաներս, մեր խնջույքը կատարենք: Այս տարի առատ է մեր հունձը. մարդու միս և արյուն շատ ունենք: Կերեք, խմեցեք անխնա և ուրախացեք:

Զարհուրելի խնջույքն սկսվեց:

Յանոսը առանձին արած՝ դարձրեց գրքի Երեսը, մակագրեց վրան «Մողորի թագավորության ...Երրորդ և Քրիստոսի ծննդյան ...Երրորդ տարի» և սկսեց գրել:— «Կոտորած, բռնություն, անիրավություն...»:

2.

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԵՖՐՆԵՐԻ ԵՐԳՐ

Քարգմ. Պ. Պոռշյանց

Ազատության աշխարհում չկա բնավ
հալածանք,
Թշվառության աշխարհում չկա բնավ
ազատ կամք,
Առանց կամքի կորչում էր որդվոց որդի
մարգկան ազգ,
Ազատությունն է լույս, ազատությունն է
կյանք:
Ազատության աշխարհում զարգանում
են մտքերը,
Գերինների աշխարհում ջնջվում մտքի
հետքերը,
Առանց մտքի բթանում, վայրենանում է
մարդ,
Ազատությունն է լույս, ազատությունն է
կյանք:
Ազատության աշխարհում ուրախ Երգեր
են երգվում,
Իսկ գերության աշխարհում՝ ցավ հառաչանք
կրկնվում,
Ամեն տեղից լսվում է թշվառության
աղաղակ,
Ազատությունն է լույս, ազատությունն է
կյանք:
Ազատության աշխարհում միևնույն է խոսք և գործ
Իսկ գերության աշխարհում չկա երբեք
ոչինչ գործ.
Կյանքն այն տեղում ունի չի
պատճառում մեծ զգվանք

Ազատությունն է լույս, ազատությունն է
կյանք:

Ազատության աշխարհում կինն չ մեկ
քաղաքացի,

Իսկ գերության աշխարհում չիք գոյություն
կին մարդի,

Նա սիրով, խաղալիք, կրավորական է
էակ,

Ազատությունն է լույս, ազատությունն է
կյանք:

Ազատության աշխարհում հարգ է վայելում
մայրը,

Գերինների աշխարհում ցնորք է «հարգանք»
բառը,

Գնահատվում է այնտեղ բռնություն և
ուժ վայրագ,

Ազատությունն է լույս, ազատությունն է
կյանք:

Ազատության աշխարհում զարգանում է
մանկություն.

Իսկ գերության աշխարհում չկա բնավ
մանկություն,

Կրետիններ են այնտեղ, նրանց համար կա մտրակ,

Ազատությունն է լույս, ազատությունն է
կյանք:

Ազատության դու աշխա՛րհ, առաջ խաղա,
զորացի՛ր,

Իսկ գերության դու աշխա՛րհ, սարսափի՛ր, տկարացի՛ր.

Ազատության դու աշխա՛րհ, փառավորվի՛ր, պանծացի՛ր.

Գերության դու աշխա՛րհ, քայլ մի առաջ մի մղի՛ր: